7 ԹԵՄԱ

Բագրատունյաց թագավորությունը

Դաս 68 Պատմաաշխարհագրական միջավայրը: Քաղաքական դրությունը տարածաշրջանում

Գիտեք, որ...

- *Բաղդադում խալիֆներն իրենց անապահով զգալով, 836 թ. իրենց նստավայրը տեղափոխում են Բաղդադից հարավ 80 կմ հեռավորության վրա գտնվող Սամարա քաղաք:*

- *Կոստանդնուպոլսի պատրիարքության աթոռը երկու անգամ զբաղեցրած պատրիարք Փոթը մոր կողմից հայկական ծագում ուներ և համարվում էր ժամանակի ականավոր եկեղեցական գործիչ ու նշանավոր մտավորական:*

- *Հայազգի նշանավոր զորավար Թովմա Գազիրացին ապստամբելով բյուզանդական կայսեր դեմ, 821 թ. դեկտեմբերին պաշարում է Կոստանդնուպոլիսը: Հաջողության չհասնելով, նա ստիպված դադարեցնում է Կոստանդնուպոլսի մեկուկես տարի տևած պաշարումը:*

Լրացուցիչ նյութեր

Բյուզանդագետ Ջենկիզը հայերի մասին

Ջենկիզը գրում է. «Բյուզանդիայի ռազմական հզորությունը, ռազմական կազմակերպությունը և ռազմական հանճարը, այն հուսալի և ամուր հիմքը, որի վրա էր խարսխված բովանդակ փայլուն վերնաշենքը, ամբողջովին հայկական էր: Դա գործունյա, շատ փաղանդավոր այդ ժողովրդի ճակատագիրն էր, որ իր պատմական մեծագույն նվաճումներն ի սպաս դրեց ո՛չ սեփական կայսրության և ո՛չ սեփական մշակույթի: IX դարի կեսից մինչև XI դարի սկիզբը քաջ և նվիրված զորավարների շարքում վեց մեծ ղեկավարներ՝ որպես բյուզանդական միջին շրջանի պատմության նյութական մեծության ճարտարապետներ էին Վասիլ I-ը, Ռոմանոս I-ը, Հովհաննես Գուրգենը (Կուրկուասը), Նիկեփոր II-ը (Փոկասը), Հովհաննես I-ը (Չմշկիկը) և Վասիլ II-ը: Քաջ հայտնի է, որ բոլորն էլ հայկական ծագում ունեին»:

Դաս 69 Հայոց պետականության վերականգնումը: Բագրատունիների արքայատոհմի հաստատումը

Գիտեք, որ...

- *Աշոտ Բագրատունու հորը՝ Սմբատ Բագրատունուն, Բուղան գերեվարել է և տարել արաբների մայրաքաղաք Սամարա: Այստեղ նա հրաժարվել է հավատուրացությունից և մահապատժի ենթարկվել:*

- *862 թ. Դվին մայրաքաղաքը մեծ երկրաշարժից ավերվեց: Մեծ ավերումներ եղան և փլատակների տակ մահացան 12 հազար մարդ:*

- *Աշոտ Ի-ի գերիշխանությանն են ենթարկվել վրաց գահերեց իշխան Ատրներսեհ Բագրատունին և Հայոց Արևելքի կողմերի (Արցախ, Ուտիք, Կամբեճան) թագավոր Համամ Բագրատունին:*

- *Գերեվարվելուց առաջ Սմբատ Բագրատունին՝ իբրև ջերմեռանդ հավատացյալ քրիստոնյա, շտապեց իր պարտքը կատարելու հայ եկեղեցու նկատմամբ: Նա մեծ փութով ժողով գումարեց, որը վախճանված կաթողիկոսի փոխարեն հայոց հայրապետ ընտրեց Զաքարիա Ձագեցուն:*

Լրացուցիչ նյութեր

Խիզախ Աշոտ Արծրունին

Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին, ով գերի էր տարվել Սամարա, ուրացությամբ 857 թ. ազատվեց արաբական բանտից: Նա ստիպված էր խալիֆայությունում մնալ ևս տասը տարի, որովհետև նրա քաջությունը հարկավոր էր արաբական զորքին: Այսպես, երբ խալիֆի դեմ ապստամբեց Կազվին քաղաքը, արաբական զորքի հրամանատարը, որ Բուղայի որդին էր Մուսա անունով, իր հետ վերցրեց նաև Աշոտին՝ հայկական գնդի հետ: Այդ արշավանքի ընթացքում հայերը մեծ քաջություն ցույց տվեցին: Իր ձիավոր գնդի առաջն ընկնելով, Աշոտը խիստ ձայնով կանչեց. «Հապա՛, հայոց քաջե՛ր, թող այստեղ էլ ճանաչեն մեզ և մեր արիությունը»: Եվ մի հանդուգն հարձակումով Աշոտն ու իր մարդիկ ջարդեցին թշնամուն և պարտության մատնեցին: Այդպիսի գործերով, սակայն Արծրունի իշխանն իր դրությունը ծանրացնում էր, որովհետև արաբները չեն ցանկանում

նրան ձեռքից բաց թողնել: Ուստի, մնում էր առանց հարցնելու թողնել արաբական մայրաքաղաքը ու վերադառնալ հայրենիք: Այդպես էլ անում է: Արաբական կառավարությունն արգելք չհարուցեց նրա դեմ, ընդհակառակը, նրան վերադարձրեց նախկին բոլոր իրավունքները:

Աշոտ Արծրունին նորից հայրենի երկրում էր, շրջապատված նախկին հմայքով ու մեծ հեղինակությամբ:

Դաս 70-71 Պետական անկախության ամրապնդումը: Ներքին և արտաքին մարտահրավերները

Գիտեք, որ...

- *Բագրատունիների տոհմական զինանշանի ամենավաղ օրինակը 862 թ. գրված Ավետարանի մանրանկարն է: Մանրանկարում պատկերված են զույգ առյուծներ կամ հովազներ, նրանց միջև՝ կենաց ծառը:*

- *Աշոտ Ի-ի կնոջ անունը Կատրանիդե էր, ով իր ամուսնու աջակիցն էր, ողջախոհ և իմաստուն կին:*

- *Սյունիքի Սմբատ գահերեց իշխանի կինը Արծրունյաց իշխան Գագիկ Արծրունու քույրն էր: Չնայած այդ հանգամանքին, նրանց միջև կատաղի պայքար էր գնում Նախճավանի համար:*

- *Պատմաբան Լեոն ասում է, որ Աշոտ II-ը, լքված բոլորից, Սևանա կղզում մեկուսացել էր ընդամենը հարյուր թիկնապահով:*

Լրացուցիչ նյութեր

Մոր խորհուրդը թանկ է

Մի անգամ Սմբատ I Բագրատունի թագավորին հարցնում են.

– Մարդ կյանքում ամենից շատ ո՞ւմ խորհուրդներով պիտի առաջնորդվի:

– Արքան պատասխանում է.

– Մինչև 15 տարեկանը պիտի լսի խնամակալին, մինչև 30-ը՝ իմաստուններին, հետո ինքն իրեն, միայն մայրական խորհուրդն է, որ մարդ պարտավոր է անսալ ծննդյան օրից մինչև մահ:

Սկզբնաղբյուրներ

* * *

«Իսկ մեր Հայաստան աշխարհին նրանց (Աշոտ I, Սմբատ I) օրոք տերն էր այցի եկել՝ պատպարված և բոլոր բարի գործերի մեջ հաջողած, բնակեցվեցին ամենքո իրենց ժառանգությունների մեջ և սեփականելով հողը՝ տնկեցին այգիներ և արմատացրին ձիթենիների ու պարտեզների բուրաստաններ, հերկեցին հերկերը՝ ազատելով փշերից և հարյուրապատիկ պտուղ հավաքեցին: Լեփ-լեցուն էին ցորենի շտեմարանները, երբ հունձն ավարտվեց, լցվեցին գինու հորերը

այգեկութին, և լեռները ցնծություն զգեցան, որովհետև նրանց վրա բազմացան արոտական արջառների նախիրները և ոչխարների հոտերը»:

Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցի

* * *

«Իսկ Սմբատը թագավորելով՝ տիրում է իր բոլոր երկրներին:

... Սրա և հոր իշխանության օրոք շինություն, խաղաղություն էր մեր հայոց աշխարհում, ըստ մարգարեության՝ ամեն ոք իր որթի ու թզենու ներքո էր հանգստանում»:

Ստեփանոս Տարոնեցի

* * *

«Այս Աշոտը, ով, ըստ յուր քաջապինդ արիության, Երկաթ անվանվեց արիության բազում գործեր ցույց տալով... հալածեց արաբների զորքը մեր հայոց աշխարհից»:

Ստեփանոս Տարոնեցի

Սմբատ I-ը մխիթարում է Դվինի երկրաշարժից տուժածներին, նկարիչ՝ Ջ. Ձասսո

Դաս 72-73 Բագրատունյաց թագավորության վերելքը և հզորացումը

Գիտեք, որ...

- *Անիի Բագրատունիները, հայ Արշակունիների նման, չեն ունեցել իրենց սեփական դրամները:*
- *Հայոց Աբաս Բագրատունի թագավորն Ատրպատականում Սաջյանների ամիրայության վերացումից հետո (929 թ.), փորձ չի արել պատերազմ սկսելու՝ Դվինը վերանվաճելու համար: Մոտ 12 տարի (929-941 թթ.) Դվինը մնում է բախտի քմահաճույքին:*
- *Կարծիք կա, որ Սմբատ II-ին թունավորել է եղբայրը՝ Գագիկը, ում պաշտպանել են հայ մեծամեծերը:*
- *Գագիկ II-ին հնազանդվելուց հետո Դավիթ Անհողինը մոտ 20 տարի նվիրվում է իր երկրի՝ Տաշիր-Ձորագետի շենացմանը: Ասում են, որ նա 12 նոր բերդ ու ամրոց է շինել, չհաշված նորոգվածները: Դավթի ձեռակերտներից է Լոռե բերդը, որ այնքան կարևոր դեր է կատարում Գուգարքի պատմության մեջ:*

Լրացուցիչ նյութեր

Աբաս թագավորը և գուսանը

Մի անգամ Աբաս թագավորը, մտաբերելով իր հին ծանոթ գուսանին, ում սրտապարար երգը շատ անգամ էր հիացրել իրեն, հրավիրում է արքունիք: Գուսանը գալիս է, կանգնում արքայի դիմաց, շփոթվում ու սկսում է արտասվել:

– Քեզ ի՞նչ պատահեց, մա՛րդ, ինչո՞ւ ես արտասվում, երգիր, ես քեզ կանչել եմ քո հրաշք ձայնը լսելու համար,– ասում է արքան:

– Տեր արքա, ես այլևս երգել չեմ կարող, կտրվել է ձայնս:

– Բայց դրա համար արտասվել պետք չէ, վերցրու այս ոսկիները և հոգա հոգսերդ:

– Չեմ ուզում, արքա, ես չեմ կարող ձեր վարձատրությունը ստանալ:

– Դու ձրի չես ստանում, դու ստանում ես քո առաջվա երգերի համար: Լավ երգի համար գուսանը պետք է վարձատրվի մինչև իր կյանքի վերջը, և՛ այն ժամանակ, երբ հնչեղ ձայն է ունենում, և՛ այն ժամանակ, երբ նրա ձայնը կտրվում է, – ասում է Աբաս Բագրատունի թագավորը և ոսկիները հանձնում գուսանին:

Գագիկ I արքան և գինու տիկը

Գագիկ արքան նստած իր ճերմակ նժույգին, անցնում էր Անիի բուն փողոցով: Հենց այդ ժամանակ նրա առջև է դուրս գալիս հարբած քաղաքապետը, բռնում արքայի ձիու սանձից և ասում.

– Ինչ արժի քո ձին, ես ուզում եմ գնել:

Արքայի շքախմբի անդամները բռնում են քաղաքապետին և տանում տուն: Հաջորդ օրը, գինովությունն անցնելուց հետո, երբ քաղաքապետն սթափվում է, սարսափահար է լինում: Նա կանչում է իմաստությամբ հայտնի խորհրդականին և հայցում նրա օգնությունը:

– Ոչինչ,– ասում է խորհրդականը,– ես քեզ կասեմ, թե ինչ կպատասխանես արքային, երբ նա քեզ կանչի:

Այս խոսակցությունից քիչ անց, արքայի հրամանով քաղաքապետին տանում են արքայի մոտ: Վերջինս իր հետ վերցնում է մի փիկ գինի: Գագիկն ընդունում է քաղաքապետին և հեգնանքով հարցնում.

– Ինչ գին ես տալիս իմ ձիուն:

Քաղաքապետը հանում է գինու իր փիկը, դնում արքայի առաջ ու ասում.

– Ձերդ մեծություն, ձիդ առնողն այս փիկն է, ծախսողն էլ դու ես, ես այդ առևտրի մեջ միայն միջնորդ եմ:

Քաղաքապետի սրամիտ պատասխանը գոհացնում է արքային և նրան ազատում պատժից:

Դաս 74 Ենթակա թագավորությունները

Գիտեք, որ...

- *Կարսի թագավորությունն զբաղեցնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան մասի 8 գավառ և ուներ 10 հազար քառ. կմ տարածք:*
- *Անանիա Մոկացի կաթողիկոսը, Գագիկ Արծրունուն և Բագրատունի Աբաս թագավորին հիշելով որպես հայոց ինքնակալ թագավորներ, առաջին տեղում դնում է Վասպուրականի թագավորին:*
- *Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը Գագիկ Արծրունուն տիտղոսավորում է «իշխանաց իշխան», մինչդեռ Աբաս Բագրատունի թագավորին կոչում է սոսկ մագիստրոս:*
- *Մովսես Կաղանկատվացի պատմիչը Համամի իշխանությունը կոչում է «Աղվանից թագավորություն»:*

Լրացուցիչ նյութեր

Գագիկ II Կարսեցի արքան

Աբաս II Կարսեցուց հետո գահը, «հայոց թագավոր» և «շահնշահ» տիտղոսները ժառանգել էր նրա որդին՝ Գագիկ II Կարսեցին: Նա կրթված, եռանդուն, դիվանագիտական ու զինվորականի ունակություններով օժտված մարդ էր: Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «հանճարեղ ու իմաստասեր»: Գագիկ II-ը հովանավորել է գիտնականներին, խրախուսել գիտության և դպրոցի զարգացումը, Կարսում հիմնադրել ճեմարան: Նա փորձել է իր շուրջը համախմբել սելջուկյան արշավանքներից դեռևս ազատ մնացած ավատատերերին, գավառական արքայիկներին, միավորել ցրված ուժերը և վերականգնել համահայկական պետական կառույցները

Գագիկ II-ը նաև ակտիվ մասնակցություն է ունեցել Բագրատունյաց վերջին արքա Գագիկ II Անեցուն գերությունից ազատելու գործին: Ինչպես հայտնի է, 1079 թ. Մանդալե եղբայրները ձերբակալում են Գագիկ II Անեցուն և արգելափակում իրենց Կիզիստրա ամրոցում: Գագիկ II Կարսեցին հայ այլ իշխանների հետ զինված հարձակում են գործում Կիզիստրայի վրա և փորձում ազատել նրան արգելափակումից, բայց չեն կարողանում:

1079 թ. Մանդալե եղբայրները սպանում են Գագիկ II Անեցուն, իսկ դրանից երկու տարի անց՝ 1081 թ. բյուզանդացիներն սպանում են նաև Գագիկ II Կարսեցուն:

Դաս 75 Անիի թագավորության թուլացումն ու անկումը

Գիտեք, որ...

- *Գագիկ I արքան երկու աղջիկ ուներ, որոնցից մեկը ամուսնացած էր Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ, իսկ մյուսը՝ վրաց թագավորի:*
- *Ս. Փրկիչ եկեղեցու պատին արված մի արձանագրության մեջ Հովհաննես-Սմբատ թագավորին տրված է «տիեզերակալ» տիտղոսը: «Տիեզերակալ» տիտղոսը սոսկ հարգանքի արտահայտություն է և այս դեպքում բոլորովին չի նշանակում, թե այն կրողն աշխարհ է նվաճել:*
- *Հովհաննես-Սմբատի մահից հետո Դավիթ Անհողին փորձել է տիրանալ Անիի գահին, սակայն պարտություն է կրել սպարապետ Վահրամ Պահլավունուց:*
- *Վասիլ II-ը, Տրապիզոնում Պետրոս կաթողիկոսի Ջրօրհնեքի ծեսից որոշ ժամանակ անց թաքուն գնաց Անտիոք, անցավ Սև լեռը՝ Պաղակձիակ կոչվող տեղը, տեղի գլխավորից և հոգևոր առաջնորդից առավ քրիստոնական կնիքը, այնուհետև համարվեց Հայոց երկրի հայրը:*

Լրացուցիչ նյութեր

Գետի ընթացքը կանգնեցրած կաթողիկոսը

Վասիլ II կայսրը, ով շատ գոհ էր մնացել Անին Բյուզանդիային հանձնելու պայմանագրից, մեծամեծ պատիվների է արժանացնում Պետրոս կաթողիկոսին: Պատիվներից էր այն, որ Պետրոսը կայսերական հրավեր ստացավ՝ 1022 թ. հունվարի 6-ին Ջրօրհնեքի արարողությունը հայկական ծեսով կատարելու վերաբերյալ: Ծեսը տեղի ունեցավ Տրապիզոնի փոքրիկ գետակի վրա: Կայսրը ներկա հույն հոգևորականներից բարձր դասեց Պետրոս կաթողիկոսի և հենց նրան առաջարկեց առաջինն օրհնել ջուրը: Երբ Պետրոսը սուրբ մեռոնի ձեթը կաթեցրեց ջրի մեջ և սուրբ խաչի նշանով խփեց ջրին, հանկարծակի լուսեղեն ճառագայթների ցնցուղներ փայլեցին ջրի միջից, գետի ընթացքը կանգ առավ և չհոսեց: Ներկաները տեսնելով այդ, սարսափեցին:

Հետագայում այս պատմությանն ավելանում են նոր զրույցներ, ըստ որոնց՝ ջրերի հոսքը կանգնելուց հետո դրանք հոսել են դեպի հետ՝ դեպի գետի ակունքները: Այս զրույցների արդյունքում Պետրոս կաթողիկոսն ստացել է Գետադարձ մականունը:

Հայերը պարտության են մատնում Անիի վրա հարձակված բյուզանդական զորքերին, նկարիչ՝ Ջ. Ձասսո

Դաս 76 Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում

Գիտեք, որ...

- *1001 թ. ավարտվում է Անիի Մայր տաճարի շինարարությունը և կաթողիկոսական աթոռն Արգինայից տեղափոխվում է հայոց մայրաքաղաք:*
- *Երբ Աշոտ Ի-ը հիվանդանում է, իր մոտ է կանչում Գևորգ Գառնեցի կաթողիկոսին: Նա դրամական գումարներ, ձիերի երամակներ ու անասունների նախիրներ է նվիրում եկեղեցիներին և կարգադրում իր համար պատարագ անեն:*
- *Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը Ատրպատականի Յուսուֆ ամիրայից նվեր էր ստացել հագուստներ և մի ջորի, որը զարդարված էր իբրև կաթողիկոսի հեծնելու գրաստ:*
- *Կ. Պոլսում գտնվելու առաջին օրը Պետրոս Գետադարձին Կոստանդին Մոնոմախի հրահանգով մեկ կենտրինար դրամ էր հատկացվել: Դա հեքիաթային թիվ էր: Բավական է ասել, որ մեկ կենտրինարը հավասար էր 7200 ոսկեդրամի, որը Տարոնի իշխանի՝ Բյուզանդիայից ստացած 10 տարվա աշխատավարձն էր:*

Լրացուցիչ նյութեր

Տարօրինակ որոշում

Հրաժարվելով հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն տված երդման գրից, Նասր զորավարը որոշում է բռնել նրան: Կաթողիկոսն այդ ժամանակ գտնվում էր Բյուրական գյուղում, որտեղ իր սեփական միջոցներով կառուցած փոքրիկ ամրոցն էր և վանքը: 923 թ. Նասրի զորագունդը հարձակվում է Բյուրականի վրա: Այստեղ հավաքված հոգևորականությունը և բնակչությունը՝ կաթողիկոսի գլխավորությամբ վճռում են դիմադրել արաբներին: Ամրոցի պաշտպանները մեծ հաջողությամբ յոթ օր դիմադրում են թշնամուն, բայց նույնիսկ այդ փոքրիկ միջավայրում գտնվում են մի քանի դավաճաններ, որոնք մատնում են ամրոցը: Կատաղած թշնամին ներխուժելով ամրոց, սրի է քաշում ամրոցի պաշտպաններից շատերին՝ մոտ 200 հոգու, իսկ բնակիչների մի մասը և հայոց կաթողիկոսը գերի են տարվում:

Հանկարծ Նասրը մի անսպասելի դատաստան է անում. նա գլխատել է տալիս այն դավաճաններին, ովքեր մատնել էին ամրոցը, իսկ գերիներին ազատում է, բացի կաթողիկոսից:

Դաս 77 Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները: Թոնդրակյան շարժում

Գիտեք, որ...

- *Գրիգոր Մագիստրոսը թոնդրակեցիների կենտրոնատեղին՝ Թոնդրակ գյուղն անվանում է շնավան, իսկ աղանդապետին, որ այդ ժամանակ Ղազարն էր, անվանում է «շեկ շուն»:*

- *Հայոց կաթողիկոսներից Անանիա Մոկացին հանձնարարել է իր ժամանակի խոշոր աստվածաբան, փիլիսոփա Անանիա Նարեկացուն գրել մի հատուկ աշխատություն՝ թոնդրակյանների ուսմունքը հերքելու և նրանց «մոլորությունները» մերկացնելու նպատակով: Այդ աշխատությունը գրվել է, բայց մեզ չի հասել:*

- *Գրիգոր Մագիստրոսը խրախուսում է Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, որպեսզի նա վճռական լինի թոնդրակյանների դեմ պայքարում: Մեկը եթե հայհոյում է ժողովրդի իշխանին, ապա մահապատիժ պետք է կրի, ուրեմն առավել մեծ պատիժ պետք է կրի եկեղեցուն հայհոյողը, ասում է Պահլավունի իշխանը:*

Լրացուցիչ նյութեր

Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը Այրարատի գյուղացիական ապստամբության մասին

Ստորիններն աշխատում էին ավելի ձեռներեց լինել, քան մեծամեծերը, և ծառաները խրոխտանալով, փքվելով ու մեծ ապստամբություն բարձրացնելով՝ ըստ Սողոմոնի, հրամայում էին, որ տերերը տրեխ հագնեն ու գետնի վրա ման գան, իսկ իրենք հեծնում էին ամեն ինչ ոտի տակ տվող երկարավիզ ձիերի վրա: Իսկ մեր թագավորներին, պետերին և իշխաններին, որ բնիկ մեր նախարարություններն էին, աշխատում էին հանել և դուրս քշել յուրաքանչյուրին իր բնակությունից և, ըստ իրենց ցանկության, կարգել պատահական նոր պայազետներ և սպասալարներ...

* * *

Եղբայրը եղբոր դեմ և ազգակիցները ազգակիցների դեմ ընդվզելով, նախանձ,

չարակնություն, գրգռություն և կատարյալ ատելություն էին միմյանց նկատմամբ տածում: Եվ այսպես բոլորը մի խումբ կազմած, միմյանց ընդհարվելով, հակառակվում ու պայքարում էին, և միշտ սուրը կողքերից կախված, ավելի քան թշնամիների, միմյանց արյուն էին թափում և, առհասարակ, քաղաքները, գյուղերը, ավանները, ագարակները, նաև իրենց տներն իրենց ձեռքով քանդում էին...

Դաս 78 Բագրատունյաց թագավորության պետական կարգը և բանակը

Գիտեք, որ...

- *Հայոց Սմբատ I արքան թագավոր է օծել վրաց գահերեց իշխան Ատրներսեհին, ով հիմք էր դրել վրաց Բագրատունիների թագավորական արքայատոհմին:*

- *Բագրատունիների ենթակա հայոց թագավորները ևս թագ էին կրում: Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին կրում էր բազմարվեստ հորինվածքով զուտ ոսկուց թագ՝ հյուսված մարգարիտներով ու պատվական քարերով:*

- *Թագավորական իշխանության ձևակերպումը տվել է Գագիկ II թագավորը, ով Կ. Պոլսում բողոքելով իշխանների դավաճանության դեմ, ասել է. «Հայոց տան տերը և թագավորը ես եմ»:*

- *Հայոց Բագրատունի թագավորներն իրենց հրովարտակները, հրամաններն ու կարգադրությունները քանդակել էին տալիս նաև եկեղեցիների պատերին: Դրանք հաճախ վանքերին նվիրատվությունների կամ դրանց հարկերից ազատելու վերաբերյալ էին:*

Լրացուցիչ նյութեր

Բագրատունիների զինանշանները

Հայաստանի բոլոր ազնվական տոհմերը, այդ թվում՝ Բագրատունիներն ունեցել են զինանշաններ, որոնք ունեն շատ խորը պատմական արմատներ և ավանդույթներ:

Տվյալներ կան, որ Բագրատունիների տոհմական զինանշանը ձևավորվել է ուրարտական շրջանում: Հնագիտական պեղումներից հայտնաբերվել են ուրարտական, Խալդ աստծո կնոջ՝ Բագբարտուի պատկերներով արծաթե կրծքազարդեր, որոնցում նա պատկերված է գահի վրա նստած՝ կրծքին առյուծի պատկեր: Քանի որ Բագբարտու աստվածուհին համարվում է Բագրատունիների տոհմական անվանադիրը, ուստի հնագիտական գտածոների վրայի նշանները վերաբերում են Բագրատունիներին: Հետագայում այդ նշաններից առյուծներն արտացոլվում են նրանց նախարարական–տոհմական զինանշանի վրա:

Բագրատունիների նախարարական զինանշանի վրա այսօր հայտնի ամենավառ օրինակը 862 թ. գրված Ավետարանի մանրանկարն է: Դրանում պատկերված են զույգ առյուծ (կամ հովազներ), նրանց միջև կենաց ծառն է, ծառի ներքևի մասում օձեր են: Հետագայում զինանշանի հորինվածքում որոշակի ձևափոխումներ են կատարվել: Օրինակ՝ Թալինի ամրոցի գլխավոր մուտքի քանդակը պատկերում է զույգ առյուծ: Բագրատունիների պետական խորհրդանիշի օրինակ է Անիի գլխավոր դարպասի վրա քանդակված հովազը՝ առնված շրջանակի մեջ, որի վրա դրված է խաչը:

Դաս 79 Բագրատունյաց թագավորության տնտեսությունը: Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները

Գիտեք, որ...

- *Կահիրեի գանձարանում, իբրև շատ թանկարժեք իր, պահվում էր Մութավաքիլ խալիֆի վրանը, որ պատրաստված էր որդան կարմիրով ներկված ոսկեթել հայկական գործվածքից:*

- *Արաբ մատենագիր Իբն ալ Ֆաքիհի վկայությամբ, Արաքսի հովիտը, այսինքն՝ Արարատյան դաշտն ունեցել է հազար բնակավայր, իսկ մատենագիր Յակութ ալ Համավին ամբողջ Հայաստանի բնակավայրերի քանակը հասցնում է տասնութ հազարի:*

- *Վանա լճի տառեխ ձուկը վաճառվում էր շատ երկրներում: Արաբ հեղինակները նշում են, որ մի թզաչափ այդ ձուկը աղ դրած վաճառքի էին տանում Ջազիրա (Միջագետք), Մոսուլ, Հալեպ, Խորասան, նույնիսկ Հնդկաստան:*

- *Բյուզանդական ոսկե դրամները Հայաստանում հայտնի էին «բիզանդ» կամ «դահեկան» կամ «ոսկե դահեկան» անուններով:*

Լրացուցիչ նյութեր

Մեր Անին

«Անին մարդաշատ քաղաք էր, լի բյուրավոր տղամարդկանցով ու կանանցով, ծերերով ու երեխաներով, մի բան, որ տեսնողներին զարմանք էր պատճառում և (թշնամու) զինվորների մեծ մասին կարծել տալիս, թե հայոց աշխարհի մեծ մասն է դա: Այդ օրերին Անիում հազար ու մի եկեղեցի պատարագ էր մատուցում: Քաղաքն ամբողջովին գտնվում էր քարաժայռի վրա՝ շրջապատված Ախուրյան գետով և միայն մեկ կողմից մեկ նեղընկեցի չափ հարթավայր էր, որտեղի պարիսպն այլազգիները բաբանի օգնությամբ տապալեցին... Չարագործ ազգից մի մարդ Ս. Կաթողիկե եկեղեցու գմբեթը բարձրանալով, նրա վրայի թանկարժեք խաչը գետին տապալեց, ապա մտնելով եկեղեցու գմբեթի վրա գտնվող դռնից ներս, Հնդկաստանից մեկ բյուր գանձով Սմբատ Տիեզերակալի բերել տված կլոր

կանթեղը գցեց եկեղեցու մեջ և ջարդուփշուր արեց: Այն փասներկու լիտր էր կշռում: Խաչը գմբեթից ցած գցելուն պես սասփիկ որոտում եղավ, ուժեղ անձրև տեղաց... Աշխարհում նմանը չգտնվող բյուրեղապակյա կանթեղի ջարդուփշուր լինելու լուրը սուլթանին շատ փխրեցրեց, իսկ մեկ մարդաչափ արծաթե խաչը, որ ցած գցեցին, փարան դրին Նախճավան քաղաքի մզկիթի շեմին, որ (անընդհատ) փրորեն այն: Մինչ օրս էլ այդ խաչն այնտեղ է»,– ասում է պատմիչ Մատթեոս Ուռհայեցին:

Դաս 80-81 Բագրատունյաց թագավորության մշակութային ժառանգությունը

Գիտեք, որ...

- *Մինչև X դարը Հայաստանում գոյություն է ունեցել երկու բարձրագույն դպրոց, որոնցից մեկը Վաղարշապատի վարդապետարանն էր, իսկ մյուսը՝ Սյունյաց բարձրագույն դպրոցը:*

- *Տարրական դպրոցների աշակերտներին միջնադարում անվանում էին «Ձեռնասուն մանկունք», այսինքն՝ հոգևորականի, ասել է թե՝ վարդապետի ձեռքի տակ աճած ու դաստիարակված աշակերտներ:*

- *Հովհաննես Դրասխանակերտցու սիրելի հերոսներն են Սմբատ I և Աշոտ II Երկաթ թագավորը: Պատմագիրը հիացմունքով է խոսում նրանց միավորիչ գործունեության մասին և դատապարտում է Գագիկ Արծրունու անջատական գործելակերպը:*

- *Տրդատ ճարտարապետը վերականգնել է նաև Կ. Պոլսի հռչակավոր Սուրբ Սոֆիայի տաճարը:*

Լրացուցիչ նյութեր

Մանուել ճարտարապետը և արծվի թռիչքը

Վանա ծովակի հարավարևելյան կողմում գեղեցկանիստ Աղթամար կղզին է, որի ամենաբարձր կետը կոչվում է Բարձր քար կամ Ռաֆֆու քար: Վիպասան Ռաֆֆին այցելել է Աղթամար կղզի, նստել այդ քարի վրա և գրել իր «Ձայն տուր, ով ծովակ» բանաստեղծությունը:

Ասում են 915–921 թթ. կղզու վրա Ս. Խաչ եկեղեցու հրաշակերտ տաճարը կառուցելու ժամանակ, ճարտարապետ Մանուելը ամեն օր մի կտոր հաց է վերցնում, ծայրից կծում և դնում Բարձր քարի վրա: Կեսօրին երկնքում մի արծիվ էր հայտնվում, գեղեցիկ ճախրապտույտներ անելուց հետո վայրէջք էր կատարում Բարձր քարի վրա, անուշ անում հացի կտորը ու նորից վեր սլանում: Մի օր Գագիկ Արծրունի արքան Մանուելին հարցնում է, թե մի հացի պատառն արծվին տալն ինչ նշան է:

– Արծվաթռիչք կոթող արարելու համար մարդ պիտի իր հացի պատառը արծվի հետ կիսի,– պատասխանում է ճարտարապետը: